

Գեղարքունիքի մարզպետն աշխատանքային շրջայց է կատարել 15.06.2017

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն աշխատանքային շրջայց է կատարել Գավառ քաղաքի Լևոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոն և տեղում ծանոթացել շինարարական աշխատանքների ընթացքին:

Այցի շրջանակներում մարզպետին ներկայացվել է շինարարության ընթացքի, շինարարության ավարտից հետո թատրոնի շենքի կահավորման և տեխնիկական հագեցվածության հետ կապված հարցեր:

Թատրոնի անձնակազմի հետ քննարկվել է նաև դերասանական կազմի համալրման, մշակութային օջախի հետագա զարգացումն ապահովելու հետ կապված հարցեր: Մարզպետն իր պատրաստակամությունն է հայտնել թատրոնի անձնակազմի հետ քննարկել վերջիններիս կողմից ներկայացվելիք առաջարկները:

Կարեն Բոթոյանն իր խոսքում կարևորել է նաև Գեղարքունիքի մարզում մշակութային կյանքն ավելի ակտիվացնելու անհրաժեշտությունը և հայտնել, որ այդ նպատակով իր լիազորությունների շրջանակներում պատրաստ է իրականացնել կոնկրետ քայլեր: